**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«20» «նոյեմբերի» 2024 թ. № 468-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ի N 93-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի մարտի 26-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, էկոպարեկային ծառայության, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության և պետական հիմնարկի գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի ապրիլի 14-ի N135-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 93-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 1-ին կետի 1-ին ենթակետը լրացնել նոր պարբերություններով.

թ. իրավաբանական վարչություն,

ժ. ռազմավարական քաղաքականության վարչություն,

ժա. բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն,

ժբ. «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժգ «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժդ. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժե. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժզ. «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժէ. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

ժը. «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն:»:

2) Ուժը կորցրած ճանաչել 1-ին կետի 5-րդ ենթակետը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

11/20/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«20» նոյեմբերի 2024թ.

ք. Երևան